ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

««ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԿԱՆՈՆԱԿԱՐԳ» ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» (ԿՈԴ՝ Պ-1271-25.02.2026-ՊԻ-011/0) ԵՎ ««ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՊԱՏԳԱՄԱՎՈՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԵՐԱՇԽԻՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» (ԿՈԴ՝ Պ-12711-25.02.2026-ՊԻ-011/0) ՕՐԵՆՔՆԵՐԻ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԻ

№	Առաջարկության (փոփոխության, լրացման) հեղինակը	Հոդվածը, կետը, որին վերաբերում է առաջարկությունը	Առաջարկություն (փոփոխություն, լրացում)	Առաջարկության վերաբերյալ հեղինակի (հիմնական զեկուցողի) եզրակացությունը	Առաջարկություններն ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը
1.	Պատգամավոր Զարուհի Բաթոյան	««ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԿԱՆՈՆԱԿԱՐԳ» ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ	Նախագծի վերնագիրը խմբագրել հետևյալ շարադասությամբ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ «ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԿԱՆՈՆԱԿԱՐԳ» ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ	Ընդունվել է:	Ընդունվել է:

		ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» (ԿՈԴ՝ Պ-1271-25.02.2026-ՊԻ-011/0) օրենքի նախագծի վերնագիր:	ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ»: Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի համապատասխան դրույթները՝ առաջարկվում է վերնագիրը շարադրել նոր խմբագրությամբ:		
2.	Պատգամավոր Զարուհի Բաթոյան	Նախագծի 1-ին հոդված	Նախագծի 1-ին հոդվածով նախատեսվող Օրենքի 4-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետում նախատեսվող լրացումը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝ «(քաղաքացու տեղաշարժման դժվարության դեպքում՝ նաև տեսակապի միջոցով)»: Առաջարկվող փոփոխությամբ նախատեսվում է պատգամավորի պարտականություններում սահմանված քաղաքացիների ընդունելությանը վերաբերող կարգավորումը լրացնել՝ տեղաշարժման դժվարություն ունեցող անձանց համար տեսակապով հաղորդակցվելու հնարավորության	Ընդունվել է:	Ընդունվել է:

			ամրագրումով:		
3.	Պատգամավոր Զարուհի Բաթոյան	««ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՊԱՏԳԱՄԱՎՈՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԵՐԱՇԽԻՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» (ԿՈԴ՝ Պ-12711-25.02.2026-ՊԻ-011/0) օրենքի նախագծի 1-ին հոդված	Նախագծի 1-ին հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝ ««Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի պատգամավորի գործունեության երաշխիքների մասին» 2016 թվականի դեկտեմբերի 16-ի ՀՕ-20-Ն օրենքի 11-րդ հոդվածի 3-րդ մասի 3-րդ կետում «ընդունելությունը.» բառից հետո լրացնել «՝ տեղաշարժման դժվարություն ունեցող անձանց համար ապահովելով նաև տեսակապով հաղորդակցվելու հնարավորություն» բառերը:»: Առաջարկվող փոփոխությամբ նախատեսվում է պատգամավորի պարտականություններում սահմանված քաղաքացիների ընդունելությանը վերաբերող կարգավորումը լրացնել՝ տեղաշարժման դժվարություն ունեցող անձանց համար տեսակապով հաղորդակցվելու հնարավորության	Ընդունվել է:	Ընդունվել է:

			ամրագրումով: Հայաստանի Հանրապետության Սահմանադրության եւ օրենքների պահանջներին համապատասխանության տեսանկյունից «Հայաստանի Հանրապետության Ազգային Ժողովի պատգամավորի գործունեության երաշխիքների մասին» օրենքում փոփոխություն կատարելու մասին» օրենքի նախագծի 1-ին հոդվածում առաջարկվում է շտկել «Հայաստանի Հանրապետության Ազգային Ժողովի պատգամավորի գործունեության երաշխիքների մասին» օրենքի ընդունման տարեթվում առկա վրիպակը՝ «2017» թիվը փոխարինելով «2016» թվով:		